Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 14-ի N 758 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԳՐԱՎՎԱԾ (ՎԵՐՑՎԱԾ), ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՎ ԳՏՆՎԱԾ ԶԵՆՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կենտրոնական ապարատի ստորաբաժանումների, ոստիկանության՝ Երևան քաղաքի և մարզային վարչությունների և դրանց ենթակա ստորաբաժանումների կողմից հանրային իշխանության մարմիններից, հասարակական կազմակերպություններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից առգրավված (վերցված), կամավոր հանձնված, գտնված զենքը և ռազմամթերքը (այսուհետ՝ զենք) ոստիկանության տնտեսական վարչության զինապահեստ (այսուհետ՝ զինապահեստ) ընդունելու գործընթացը:

2. Ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանումները, ոստիկանության՝ Երևան քաղաքի և մարզային վարչությունները և դրանց ենթակա ստորաբաժանումները պարտավոր են զենքը տասնօրյա ժամկետում ուղարկել ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն՝ հետազոտության կամ փորձաքննության, ինչպես նաև համապատասխան հաշվառումներով ստուգելու համար:

3. Ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում հետազոտված կամ փորձաքննության ենթարկված զենքը խմբավորվում և պահեստավորվում է:

4. Վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին կամ քրեական գործը կարճելու մասին որոշումների, դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումների կամ դատավճիռների առկայության դեպքում, զենքը (այդ թվում՝

իրեղեն ապացույց ճանաչված և դրա պահելու անհրաժեշտությունը վերացած) հանձնվում է զինապահեստ:

5. Ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետի եզրակացության հիման վրա ոստիկանության տնտեսական վարչությունը կազմակերպում է զենքի ընդունումը զինապահեստ: Զինապահեստ ընդունելիս զենքը հաշվառվում է ոստիկանության պետի հրամանով սահմանված կարգով:

6. Զինապահեստ ընդունված օգտագործման համար պիտանի զենքը ոչնչացման ենթակա չէ:

7. Սպառազինության բաժնի աշխատակցի եզրակացության հիման վրա օգտագործման համար պիտանի զենքը հաշվառվում է ոստիկանության սպառազինության մեջ՝ հետագայում ոստիկանության ստորաբաժանումների կողմից ծառայողական նպատակներով օգտագործելու համար:

8. Զինապահեստ ընդունված քաղաքացիական և ծառայողական զենքը, բացառությամբ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքի, հանձնվում է կոմիսիոն վաճառքի (մատակարար իրավաբանական անձի համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում), որից ստացված գումարը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

9. Զինապահեստ ընդունված օգտագործման համար ոչ պիտանի զենքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է ոչնչացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ